1°. Եթէ ոք չիցէ հմուտ աստուածային Հին և Նոր Կտակարանաց և տեղեակ եկեղեցական կարգաց եւ օրինաց, և չիցէ անեալ միաբանութեամբ յԵրուսաղէմ, եւ կատարեալ հմուտ ելից և մտից Աթոռոյն և ամենայն կարգաց, օրինաց և գործոց նորին, թէ արտաքուստ իցէ և թէ 'ի ներքուստ, այնպիսին ագահութեան եւ տգիտութեան ախտիւ ախտացեալ՝ եթէ յանդգնեսցի մարդահաճութեամբ և սնափառութեամբ Պատրիարք եւ կամ Փոխանորդ լինել Աթոռոյն այնորիկ՝ նզովեալ եղիցի։

2°. Եթէ ոք ժողովեսցի յաշխարհականաց՝ Պապա՝ Նազր՝ Վէքիլ՝ և այլ անուամբ վերակացու և գործակալ կարգել Երուսաղէմի, և ցուցանել նմա զայլ իմն ճանապարհ խոտորնակ, յորմէ պատճառի վնաս վանաց Ս. Յակոբայ, այնպիսին թէ եկեղեցական իցէ, և թէ աշխարհական, նզովեալ եղիցի։

3°. Եթէ ոք կամիցի և կամ պատճառ լիցի միաւորել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ Պատրիարքութեան Կոստանդինուպօլսի, և կամ ընդ այլ Աթոռոյ, և ոչ յօժարեսցի առանձին լինել Աթոռոյն այնորիկ՝ որպէս այլոց աղգացն, այնպիսին որոշեալ եղիցի 'ի Քրիստոնէական սուրբ հաւատոյն։

Զայսոսիկ երիս Կանոնական գլուխս բանից եդին յայնժամ Կաթուղիկոսն և Պատրիարքն խորհրդով ազգին՝ 'ի հաստատութիւն Աթոռոյն Երուսաղէմի, զի միշտ 'ի մտի՝ եւ գրեթէ առաջի աչաց ունէին զառաջին անցս անկարգութեանց, որ 'ի ձեռն անզգաստից ոմանց տեղի գտեալ՝ վեր 'ի վայր արարին զամենայն կարգս և զկանոնս Աթոռոյն, և հասուցին զայն 'ի յետին վատթարութիւն, և առիթ եղեն բազմապատիկ վնասուց, գայթակղութեանց և 'ի կորուստ ազգային իրաւանց։ Զի յաղագս եպերելի շահասիրութեան եւ անձնասիրութեան իւրեանց պառակտէին և զզուէին զկրօնաւորս և ցրուէին զնոսա, որպէս տեսաւ ցարդ յընթացս Պատմութեան։ Նմին իրի՝ սահմանեցին յօրէ յայնմանէ ընտրել զՊատրիարք Աթոռոյն Երուսաղէմի 'ի միաբանական Ուխտէ Ս. Յակոբայ։ Զի զայսպիսի սովորութիւնս ունէին նաեւ յառաջին դարս, յորում Եգիպտական իշխանութիւնն տիրէր Պաղեստին երկրին